ՄՌԱՎՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մռավյան գյուղը Ապարանի շրջանի հնագույն գյուղերից է, գտնվում է Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի ստորոտին, լեռնային գետակի աջ կողմում։ Հնում գյուղը կոչվել է Եղիպատրուշ։ Այստեղ է ծնվել Եսայի Ա Եղիպատրուշեցի կաթողիկոսը (775—788)[1]։ XVII դարի սկզբներին, երբ Շահ-Աբասը բնակչությունից դատարկեց նաև Ապարանը, գավառի հայկական գյուղանունները կամայականորեն պարսկացվեցին։ Եղիպատրուշը սկսեց կոչվել Տամջլու։ 1644 թ. արտագրված մի ձեռագրում Սահակ գրիչը հավելել է «Այս են անունք Նիգ գաւառին, որ ասի Ապարանք» գլուխը, որտեղ 12-րդ կարգում գրել է. «Եղիպատրուշն Փամջիլու ասի»[2]։ Փամջիլուն Տամջլու[3] (Տամջիլու) կարող էր դառնալ մեծատառ Փ-ն Տ կարդալու հետևանքով։

Պատմական Եղիպատրուշ (այժմ՝ Մռավյան) գյուղը հարուստ է պատմա-ճարտարապետական հուշարձաններով։ Գյուղի գերեզմանոցում մնում է բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատի մի հատված։ Պսակի ոճից երևում է, որ այն V դարից ուշ կառուցված չի կարող լինել։ XIII դարում հին եկեղեցուց մոտ հարյուր մետր հեռու, արևմտյան կողմում, հիմնադրվել է եկեղեցական նոր համալիր. կառուցվել է կաթողիկե եկեղեցի և գավիթ։ Կաթողիկե եկեղեցին բավականին ընդարձակ է։ Այն դրսից քառակուսի, ներսից խաչաձև կառուցվածք է։ Գմբեթը հենված է կողմնային պատերից բարձրացող թռիչք-հենարանների վրա։ Եկեղեցուն խաչաձևություն է հաղորդում կառույցի չորս անկյուններում տեղադրված կրկնահարկ խորանների համակարգը։ Կաթողիկե եկեղեցու գմբեթի սրածայր վեղարը քանդված է։ Արևմտյան պատի գրսի երեսպատման քարերի մի մասը քանդվել-թափվել է, այդ կողմից պատը ճեղքվածքներ ունի։ Եկեղեցու մյուս պատերն ամբողջական են։ Ներսի պատերին որմնանկարներ են եղել, որոնցից մի փոքրիկ հատված պահպանվել է արևմտյան պատին (նկ. 1)։

Արևմուտքից եկեղեցուն կից կառուցված է ընդարձակ գավիթը, որի ծածկը և հարավային պատն ամբողջովին քանդված են, կանգուն են միայն հյուսիսային և արևմտյան շքադռան պատերը։ Պահպանված մնացորդները թույլ են տալիս ասելու, որ այն պատկանում է քառասյուն գավիթների տիպին։ XIII դարի մյուս գավիթներից Մռավյանի գավիթը տարբերվում է աչքի ընկնող հավելվածով. նրա և կաթողիկե եկեղեցու միացման մասում, գավթի ծածկի երկու անկյուններում, կրկնահարկ ավանդատների ծածկի վրա կառուցված են երկու փոքր եկեղեցիներ, որոնք քառանիստ կառուցվածք են։ Այսպիսի հավելված ունի նաև Աշտարակի շրջանի Տեղեր գյուղում Մամախաթուն Վաչուտյանի կառուցած գավիթը։ Սակայն Տեղերի եկեղեցում գավթի կտուրի վրա կառուցված փոքրիկ եկեղեցիները գտնվում են գավթի շքադռան անկյուններում՝ անմիջապես ծածկի վրա։ Մռավյանի կաթողիկե եկեղեցին և գավիթը ունեն չորսական ավանդատուն-խորաններ (չենք հաշվում գավթի կտուրի վրա կառուցված փոքրիկ եկեղեցիները)։



Նկ. 1

Մռավյանի միջնադարյան եկեղեցական համալիրի մասին մեծանուն Թորոս Թորամանյանը 1928 թ. ապրիլի 3-ին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար Ա. Քալանթարյանին գրել է. «Չեղ հայտնի է անշուշտ, որ եկեղեցին ունեցել է ի հնումն մի հոյակապ գավիթ և եկեղեցի արև-

---

1 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 893—906։

2 Մաշտոցի անվ. Մատենադարան ձեռ. № 2180, էջ 416բ։

3 Տամջիլուն 1935 թ. հունվարի 3-ին վերանվանվել է Մռավյան։

1 ԻՌՈՒԻՍ ՈՕԷ ԿԱՒ ԹԵՐԱՐԻՆԱՅ ԵՍՄԽԻԹԱՐՆՈՒ
ԻՄՅՈՅՍԵՋԻՄՀՈԳԵՂԿՈՒ ՄԵՄՈՒՍՈՑԱԵՒ ՍՂԱՍԱՌՔՍ
ԽՄԽԵԵՂԻԿԱՆՆՀԱԲԱՌՆԼՒ ԿԱՄՐԻՉՀՐԱՄԱՆ ԱՑՍ
ՄԵՂԱՅՆՊԱՐՄԱԿԷ ԱՌԱՔԻԼՅ ԷՀ

2 † ՇՆՈՐՀԻՒ ՈՂՈՐՄՈՒԹԵ ՍԿԱԳՆ
ԵՑԻՋԽԱՀՍԻԲԱԵԽԱԿՍՈՒԹԱՆ ՄՂԱՅԻ
ՄՈՑԽԱՀՍՋԱՒ ԽԻՍՄԱՅՍԻՄ ԱԾ

3

4 ՋՄԽԻԹԱՐԻՀՍԱՒՀԱԿԱ-
ԵՋԻՈՂԵԿԱՅՋՈՒՋ
ՅԻՀԵ

5 ՍԲԻԱՋՍԲԱՐ
ԿԱԴԱՆԵՐԵՑ ԹՐ

6 ԵՍՀԵՂՆԱՅԱԽԱԽԻՆՔՍԻ
ԹՐԱ

7 ԱԽԱՀՍ+ԽԱՄԻԿԻՆ

Գծ. 1



Նկ. 2

մրտյան երկու անկյունների վրա (գավթի— Վ. Պ.) երկու բարձր զանգակատներ (?)՝ ռոմանական եկեղեցիների նման։ Գավիթը այժմ ամբողջովին փլած է, նույնպես զանգակատները մեկը գրեթե ամբողջովին, իսկ մեկը՝ կիսով չափ։ Շենքը ըստինքյան բոլորովին բացառիկ արժեք և նշանակություն ունի ճարտարապետական տեսակետով, որուն վրա արժե, որ Կոմիտեն առանձին հոգածություն ունենա»[4]։ Մեկ այլ առիթով Թ. Թորամանյանը գրել է. «...պետք է խոստովանել, որ բավականին հոյակապ եկեղեցի եղած է... և մեծ ծախքերով իրագործված»[5]։

Կաթողիկե եկեղեցու, ինչպես նաև գավթի պատերին շինարարական որևէ արձանագրություն չի պահպանվել։ Այդպիսին թերևս փորագրված է եղել կաթողիկե եկեղեցու մուտքի բարավորին։ Սակայն ճակատակալ քարը ամբողջովին քայքայվել է և միայն արձանագրության առաջին երկու տողերի վերջին մեկ-երկու տառերն են երևում։ Նման պայմաններում դժվար է որոշակիորեն նշել կառուցման ժամանակը։ XIII դարի այս եկեղեցական համալիրի կառուցման ժամանակը ճշտելուն կարող է օգնել սկզբնապես կաթողիկե եկեղեցու հարավային դրսի պատի երեք քարերի վրա փորագրված արձանագրությունը, որի առաջին մասը պարունակող երկու քարերը այժմ գտնվում են կաթողիկե եկեղեցու ներսում։ Արձանագրությունը փորագրվել է ՈՆէ (1208) թ.։ Թվագրված արձանագրությունը թույլ է տալիս ասելու, որ կաթողիկե եկեղեցին կառուցվել է XIII դարի 10—20-ական թթ.[6] Արագածոտնի, Նիգի տեր, Վաչուտյան իշխանական տան հիմնադիր Վաչե Վաչուտյանի օրոք։ Կարծում ենք նաև, որ գավիթը կառուցվել է դարի 20-ական թթ. վերջերին՝ Տեղերի գավթին զուգընթաց։ Անշուշտ, ժամանակակից լինելով են բացատրվում նաև այս կառույցների վրա կատարված հավելումները՝ գավիթների ծածկերի վրա կառուցված զանգակատները։

Մատենագրության մեջ եկեղեցական այս համալիրի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել։ Անցած դարի սկզբներին Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի արտագրած, բայց այժմ կորած[7] արձանագրության համաձայն եկեղեցին կոչվել է Աստվածածին։ Ահա այդ արձանագրությունը. «Ես՝ Սոզկ աշտարակեցի ետու զիմ այգիս յԱ[ստուա]ծածնիս և սպասաւորք սորին հաստատեցին ի տարին Ե (5) աւր պատարագել զՔ[րիստո]ս»[8]։

1976 թ. սկսվել ու արագ թափով առաջ են տարվում միջնադարյան այս հոյակապ կառույցի վերանորոգման-ամրացման աշխատանքները։

Մռավյանի V դարի և միջնադարյան եկեղեցական կոմպլեքսների շրջապատում կանգնեցված են խաչքարեր, եկեղեցիների շրջակայքում կան վաղ միջնադարյան, ինչպես նաև XVII—XVIII դդ. գերեզմանոցներ։

Ստորև ներկայացնում ենք Մռավյանի հնավայրերից մեր հավաքած վիմագիր արձանագրությունները, վերահրատարակելով նաև Շահխաթունյանցի հրատարակած երկու թերի արձանագրությունները։

Աստվածածին կաթողիկե եկեղեցի։ Հարավային դրսի պատից ընկած և այժմ եկեղեցու ներսում գտնվող երկու քարերի վրա (գծ. I, 1).

Ի թուիս ՈՆէ (1208) կամաւ [բար]երարին
Ա3 ես՝ Մխիթար Նոս... (...միաբանեցա
եկե-)/ղեցոյս եւ զիմ հոգեպահուստ ետու
սոցա։ Եւ սպասաւորք (սորա խոստացան պա-
տարագել զՔՍ)/ի տանի Եղիական շաբաթ
աւրն։ Կատարիչք հրամանաց (մերոց աւրհ-
նեալ եղիցին, եւ որք խափանե, մեր)/ մե-
ղացն պարտա[կան]է առաջի Ա3, ամէն։

Արձանագրության առաջին երեք տողերի վերջում փակագծերի մեջ վերցրած շարունակու-

4 Թ ո ր ո ս Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նամակներ, կազմեց և ծանոթագրեց Նազիկ Թորամանյանը։ Երևան, 1968, էջ 341։

5 Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, II, Երևան, 1948, էջ 201։

6 Նախկինում մենք սխալմամբ միջնադարյան այս համալիրը վերագրել ենք Քուրդ Վաչուտյանին (տե՛ս Վաչուտյան իշխանների շինարարական գործունեությունը Ապարանի շրջանում, «Հայաստանի բնություն», 1980, պ. 2, էջ 39)։

7 Թ. Թորամանյանի՝ Ա. Քալանթարյանին ուղղված նամակից իմանում ենք, որ գյուղացիները որոշել են թափված քարերը օգտագործել եկեղեցու սեղանը սալահատակելու համար։ Կոմիտեի ուշադրությունը հրավիրելով այդ հանգամանքի վրա, Թ. Թորամանյանը զգուշացնում է, որ դա միանգամայն անթույլատրելի է, քանի որ պատերից թափված քարերի մեջ կարող են լինել նաև արձանագրված քարեր։ Թերևս հենց այդպիսի անփութության զոհ է դարձել ինչպես այս, այնպես էլ Մխիթարի արձանագրությունը կրող երրորդ քարը (տե՛ս Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նամակներ, էջ 341—342)։

8 «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», աշխատասիրությամբ Յովհ. Շահխաթունեանցի, հ. 2, 1843, էջմիածին, էջ 173։

8 ԲԱՐԵԽԱՒՍԷԱՌԱՔԵԼԻՆ

9 ✝ ԱՌԱՔ
ԵԼԱՅԻՀԵԱ
ԿԱՆԿԵՑԻՉ

10 ԴԱՒԹ

11 ԱՆՔՍԻ
ԻՆՉԷԻ
ԵՐԿՐՊ

13 ԱՅՍԷՀԱԳԻՍ
ՅԱԿՈԲԻ
ՌՃ ՌՂԷ

12 ✝ ԱՅՄՀԱՆՑԱԱՆ ԿՄԲԱԿԱՐԴ
ՍԻՄԵՒՈՀԱ ՇՐԳՈ

14 ԱՅՍԷ
ՀԱՆԳ
ԻՍՄՅՈ
ԿԱՆԻՍ

15 ԱՅԱԷ ՄԱԴՄՆ
ՀԵՂԻՆ ԱՐԻՀ
ՈՒ ԱԱՅԿՈՂԱՅ
ԿԻՑԻՄԲ ԸՆԵԱ
ՄՈՒՐ ՔԱՀԱ
Ն ԻՆ ԽԻԱՐԴԵ
ՂԵՑԻՔ ԷՐ Ե
ԳՈՎԵԼԻ ՈՐ
ԷԱՂՃԱՆԷՑ
ԹԿՊ Ո-Ճ ԻՄ

Գծ. II

Նկ. 3

թյունները փորագրված են եղել երրորդ քարի վրա, որն այժմ տեղում չէ։ Իր ժամանակին արձանագրության այդ պակասող հատվածն արտագրել է Հ. Շահխաթունյանցը։ Հետագայում Թ. Թորամանյանը տեղում տեսել է միայն արձանագրությունը կրող երկու քարերը և տո-



Նկ. 4

ղերը արհեստականորեն միացնելով արտագրել է որպես ամբողջական արձանագրություն[9]։

ԳԱՎԻԹ։ Շքադռան վերևում, բարձրից (նկ. 2, գծ. I, 2).

Շնորհիւ ողորմութե[ամբ] .....ս կանկն/եցի զխաչս ի բարեխաւսութիւն ինձ եւ ծնողաց ի/մոց։ Խաչս զաւրաւոր է խիստ այս իմ։ ԱՍ։

Արձանագրության անընթեռնելի հատվածը կոտրված է։

Շքադռան ձախ կողմում, պատի մեջ ագուցված խաչքարի աղեղնաձև գոտու վրա (գծ. I, 3).

Ոտնամուրին է։

Հիշատակագրություններ խաչքարերի վրա։ V դարի եկեղեցուց քսան մետր հյուսիս, երկու հոյակապ որմնափակ խաչքարերի ճակատակալ քարի վրա (նկ. 3, գծ. I, 4).

ՁՄխիթարիչս աւշական-/եցի, որ ձեվայ-ցուց/յիշէ։

Առաջին հրատարակիչ Հ. Շահխաթունյանցը, «որ ձեվայցուց» բառերի փոխարեն կարդացել է «որթեվա»[10], Ալիշանը նույնը ուղղել է «որ-(դի)Վա...»[11]։ Այդ շփոթն առաջացել է **r և ձ** տառերը իրար տակ գրած լինելու հետևանքով։ «Ձեվայցուց» բառն այստեղ գործածվել է նախագծող-ձևող-քանդակող-կառուցող իմաստով։ Մեծ լեզվաբան Հ. Աճառյանը «ձեվայցուց» բառը համարում է բնիկ հայ բառ և գրում է, որ այն ունի «կերպ, ձև, ձև տալու համար»[12] իմաստ։ Մեզ թվում է, որ հենց այս Մխիթարիչը կարող է լինել Աստվածածին եկեղեցու և գավթի շինարար-ճարտարապետը և Տեղերի կառուցող, նշանավոր Աղբայրիկի ժամանակակիցը։ Այլապես նրան իրավունք չէր տրվի եկեղեցուց մի քանի տասնյակ մետր հեռու խաչքար կանգնեցնել և դրա ճակատին փորագրել իր անունը։

Գավթի ներսում գտնվող խաչքարի բեկորի ճակատին և խաչի ձախակողմյան թևի եզրին (գծ. I, 5).

Ս[ուր]բ խաչս բար (շարունակությունը չի փորագրվել)/Վարդան երեց[ին]։ Թվ[ին] Ռ (1551)։

Կաթողիկե եկեղեցու ձախ կողմում դրված սալանման սյան ճակատին (գծ. I, 6).

Ես՝ Հեղնայ, ախախին Ք[րի]ս[տոս]ի/Թվ-[ին] Ռ (1621)։

Գավթի ներսում, եկեղեցու մուտքի ձախ կողմում դրված խաչքարի ճակատին (գծ. I, 7).

Ս[ուր]բ խաչս Խամիկին։

Գավթի ներսում, նախորդից աջ դրված խաչքարի ճակատին (գծ. I, 8).

Բարեխաւս է Առաքելին։

Գավթի ներսում, քառակուսի քարի երեսին (գծ. II, 9).

Առա[ք]/ելս յիշեա։/Կանկ[ն]եցի զ/[խաչս]։

Գավթի ներսում, կոտրված խաչքարի կենտրոնական, բեկորին գոտու վրա (գծ. II, 10).

... Դաւթ[ի]...

Գավթի ներսում, բարաբեկորի վրա (գծ. II, 11).

...../[միաբ]անքս ի/.....ինձ եւ/երկրպ[ա-գել]...

Տապանագրեր։ Գյուղի հյուսիսային կողմում, փոքրիկ հարթության վրա գտնվող երկթեք տապանաքարի վրա (գծ. II, 12).

---

9 Թ. Թորամանյան, Նյութեր, II, էջ 202։

10 Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն..., էջ 174։

11 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 251։

12 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 5, Երևան, 1977, էջ 150։

Այս [է] հանգստարան Կրտակա որդ[ո]/Սիմեւոնա.....

Տապանագրի շարունակությունը հողմնահարված է։ Տապանաքարի ձևը, նրա վրա փորագրված տառերը VI—VII դդ. կնիքն են կրում։

Մխիթար Օշականցու որմնափակ խաչքարի աջ կողմում, սալանման տապանաքարի վրա (գծ. II, 13).

Այս է հանգիս[տ]/Յակոբի։/Թվ[ին] ՌՂԷ (1648)։

Նախորդ տապանաքարի ձախ կողմում, սալանման տապանաքարի վրա (գծ. II, 14).

Թվ[ին] ՌՃԵ (1656)։/Այս է/հանգ-/իստ Յո-/վանիս[ի]/ք[ա]հ[անայի]։

Որմնափակ խաչքարի ձախ կողմում, սալանման տապանաքարի վրա (նկ. 4, գծ. II, 15).

Այս է տապան/Հեղինարին,/որ սայ կողայ/կից է տ[է]ր Ա[ստուա]ծա/տուր քահա/նին. խիստ գե/ղեցիք էր և/գովելի։ Որ/ վաղճանէ-ց[աւ]/ Թվ[ին] ՌՃԿԸ (1719)։

Ինչպես տեսնում ենք Մռավյանում ևս առկա են 1604 թ. հետո փորագրված արձանագրություններ (դրանցից երեքը տապանագրեր են), որոնք իրավունք են տալիս ասելու, որ Շահ-Աբասի բռնագաղթից ընդամենը երկու-երեք տասնամյակ հետո գյուղում դարձյալ հայեր են բնակվել։ Նույն երևույթը մենք արդեն նշել ենք Զովունի գյուղի օրինակով[13] (Զովունին Մռավյանից հեռու է 2,5 կիլոմետր) և այժմ համոզված ասում ենք, որ սխալ է այն կարծիքը, ըստ որի «XVII դարի սկզբներին պարսկա-թուրքական երկարատև պատերազմների հետևանքով Ապարանը հիմնովին ավերվեց, փաստորեն ամայացավ»[14] և միայն 1830-ական թթ. այստեղ կրկին հայ բնակչություն հաստատվեց։

Վ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

---

13 Տե՛ս Վ. Պետրոսյանց, Զովունիի արձանագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 306։

14 «Արագած, բարև արա» (Ապարանի ժողովրդական երգեր և պարերգեր), հավաքեց, կազմեց և առաջաբանը գրեց Վ. Ա. Մելքոնյանը, Երևան, 1977, էջ 4։